

ԷԴՈՒԱՐԴ ԱԹԱՅԱՆ

(1932 - 2002)



Դեռևս 1984 թ. Ա. Ֆ. Լուսը իր ընդդիմախոսական կարծիքում Է. Աթայանի դուկտորական ատենախոսության պաշտպանությունը համարել էր «տոնական օր մեր գիտության մեջ»: Բայց դա է. Աթայանի մեզ պարզևած տոնական օրերից մեկն էր միայն: Նրան և նրա աշխատությունները ճանաչողները գիտեն՝ մտքի ու հոգու ազատության տոնը, որի անունը էդուարդ Աթայան է, չի կարող չափվել օրերով ու տարիներով: Այդ տոնն անվերջ է, որովհետև վերջ կարող է ունենալ միայն ֆիզիկական գոյությունը, որովհետև վերջը՝ որպես ազատության բացառում, անհարիր է Է. Աթայանի էությանը: Է. Աթայանից ֆիզիկապես բաժանվելու փաստը անխուսափելի թախծոտ երանգներ է մտցնում այսօրվա 70-ամյա հորելյանի սպասված տրամադրության մեջ, բայց այնքան զորեղ է լույսը, որ իրեն է ենթարկում անգամ թախիծը, ու մնում է լույսը՝ միախառնված լուսավոր թախծին: Ուստի ես ինձ իրավունք եմ վերապահում այսօր գրել ոչ թե բաժանման, այլ լույսի մասին, գրել՝ այդ լույսով համակված:

Գիտության, լայն առումով՝ իմացության բազմազան ոլորտների մեջ հիմնարար ներդրումներ են ամփոփված խորագետ լեզվաբանի, լայնախոհ փիլիսոփայի, հայկական նշանագիտական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աթայանի մենագրություններում և շուրջ վեց տասնյակ հոդվածներում: Այստեղ դրանց սուկ ամենաընդհանուր ուրվագիծն է հնարավոր ներկայացնել:

«Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» (1968) գիրքը կառուցվածքային լեզվաբանության այն եզակի նմուշներից է, որոնց կառուցվածքաբանական կերպարանքը չի խանգարել, որ հեղինակը ձերբազատվի լեզվաբանական այդ ուղղությանը հատուկ սխեմատիկությունից և սահմանափակությունից: Այս գիրքը հաղթահարում է կառուցվածքային լեզվաբանությունը «ներսից»՝ նրա իսկ մեթոդական ապարտան օգտագործելով և միաժամանակ դրա գերին չդառնալով: Արդեն այստեղ Է. Աթայանը կիրառում է այն մոտեցումը, այսինքն՝ գործնականորեն հռչակում է այն սկզբունքը, որը հետագայում, շատ ավելի խորացված և զորեղացված, պիտի դառնա նրա գիտական գործունեության (և աշխարհայեցողության) էական բնութագրերից մեկը: Նա երբևէ չի տեղավորվելու որևէ առանձին ուղղության շրջանակներում. տարբեր ուղղությունների ըմբռնումները կարող են օգտագործվել, եթե անցնեն խստապահանջ զտիչով, բայց երբեք չեն մանակվելու, առավել ևս երբեք չի կրկնօրինակվելու տեսությունը:

Լեզվական իրողությունների և ամբողջ լեզվի էության ճանաչման ձգտումն է. Աթայանին անխուսափելիորեն բերում է դեպի լեզվափիլիսոփայությունը: Հա-

ջորդ երեք մեծագրությունները՝ «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառման հայեցակերպերը» (1976), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (1981), «Լեզու և արտալեզվական իրականությունը. գոյաբանական համեմատման փորձ» (1987), Է. Աթայանի աշխատությունների ամբողջական և միասնական շարքի մի օղակն են կազմում: Այս առանձնացումն առաջին հայացքից թեմատիկ հիմնավորում ունի: Բայց այդպես է սուկ երևութապես՝ անվանապես: Լեզվափոխությունը, լեզվափոխություն լինելով, արդեն փոխություն է ինքնին, առավել ևս՝ դիտարկման հորիզոններն աներկյուղ ընդլայնող է. Աթայանի համար: Նա ինքը բազմիցս նշում է լեզվի քննության հիման վրա մշակված հասկացություններն այլ իրողությունների նկատմամբ կիրառելու հեռավորությունը: Լեզվաբանությունն իրրև մեկնակետ ընդունած է. Աթայանի լեզվափոխության կան աշխատություններում ձևավորվում է փոխություն է. Աթայանի ուրույն փոխության կան համակարգը: Երբ բանասիրական գիտությունների թեկնածուն փայլուն դոկտորական ատենախոսություն է պաշտպանում փոխության փայլունից, այդ ընդհանրապես ոչ սովորական ընթացքը միանգամայն օրինաչափ է ընկալվում է. Աթայանի համար:

«Գոյություն ունեցողն ինքնին միասնական է, բայց և տարրորոշված», այս բաները, որոնցով սկսվում է «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառման հայեցակերպերը» գիրքը, Է. Աթայանի փոխության քննարկ կարող են լինել: «Ոլորտների ոլորտը» անհամար ու բազմազան մասնատումներով կարող է պատկերացվել, և դրանցից միայն մեկն է լեզվական և ոչ լեզվական ոլորտների տարբերակումը: Սակայն այս «մասնավոր դեպքը» հիմք է դառնում ողջ իրականության խորաթափանց վերլուծության համար, այնպես որ լեզվի վերաբերյալ պնդումներով հաստատվում են ոչ լեզվական աշխարհի օրենքները, իսկ վերջինիս կազմության և գոյության սկզբունքները հավաստում են լեզվի կազմության և գոյության աթայանական ներկայացման ճշմարտացիությունը:

Օունըն պահած (և միաժամանակ

վերջապես լիաթոք շնչելով)՝ ընթերցողը վկա է դառնում շլացուցիչ գաղափարաշղթաների ծնունդին: Լեզվաբանին սկզբում թվում է, թե կարող է ընտրել իրեն առավել հոգեհարազատները՝ բովանդակություն - արտահայտություն և լեզու - խոսք խաչաձևումները, տեքստ - բառ - ասույթ - հնչյուն, համակարգ - շարակարգ - գծակարգ, ստորոգում - ներկայացում - հաղորդակցում, արտացոլում - ներկայացում - արտահայտում, նշանակում - նշանակցում - նշում, փոխաբերություն - համըմբռնում - փոխանություն և նման այլ շարքերը: Բայց ամփոջապես պարզվում է, որ մյուսները, ավելի ընդհանուր լինելով հանդերձ, նույն չափով վերաբերում են լեզվին, ինչպես որ առաջինները՝ ամեն ինչի: Եվ հրավառությունը շարունակվում է. էություն - իրականություն - երևույթ, ընդհանուր - առանձնահատուկ - եզակի, հեռունակ - գործուն - իրային, ստատիկ - դինամիկ - կինետիկ, հարաբերություն - գործառություն - անցում, տրամաբանական - հոգեկան - ֆիզիկական, տեսական - էսթետիկական - գործնական, մտղորտ - կենսոլորտ - նյութոլորտ, մտային - գազական - կամային, ոգեմշյուն - ներքմբռնողություն - երևակայություն - արտագեղում ... Այս ամենի միջոցով ներկայացվում են լեզվական միավորի՝ որպես նշանային համակարգի ըմբռնումը, ստորոգման տեսակների առանձնացումն ու խմբավորումը, լեզվական տիպերի ընդլայնված, ընդհանրացված ըմբռնումները և արտալեզվական իրողությունները դրանց միջոցով բնութագրելու հեռանկարների հաստատումը, գիտակցության մակարդակների աստիճանավորումը և այլն:

Լեզվաբանականի և ընդհանուր-փոխության կան փոխներափանցումներն ու սկզբունքային նույնությունը միանգամայն բնական են, քանի որ մի կողմից՝ «լեզուն աշխարհի էական մասն է», մյուս կողմից՝ «ինչ-որ տեղ աշխարհն էլ լեզու է»: Բայց է. Աթայանի փոխության կան համակարգը լեզվափոխության պարզ ծավալում-տարածում չէ այլ ոլորտների վրա: Նրա զուտ փոխության կան հիմնադրություններն իրենք ինքնաբավ արժեք են ներկայացնում: Աշխարհի ներքուստ միասնական կազմավորվածության գիտակցումից է բխում նրա փոխու-

փայլական դիալեկտիկան: Հեգելյան հայտնի եռանդամին է. Աթայանի ուսմունքում փոխարինած դիալեկտիկական քառանդամը՝ «գերհամարման» ամբողջացնող օղակի ներառումով (որ ավելի համահունչ է Օելինգի փիլիսոփայությանը՝ նրանց անկախ լինելով հանդերձ), գրախոսների միահամուռ և աներկբա դրվատանքին է արժանացել: Է. Աթայանին անհարիր է երկչուտ վարանումը բևեռային հակադրությունների առջև, դրանց միասնության ապրումը ճառագում է ամեն մի տողից և ներարկվում ընթերցողին: Առնվազն երկրորդական չէ, իրոք, է. Աթայանի համար՝ Տրիստանին և Իզոլդային բաժանող-միացնող թրի մասին տրակտատի հետաքրքրությունը. ավելին, նա հենց գրում է առաջին հերթին այդ թրի շողարձակումների մասին: Հայեցակերպերի և նրանց գերիշխումների դիտարկումը՝ է. Աթայանի տեսության մյուս անկյունաքարը, նրա դիալեկտիկական ապահովում է գուներանգային բազմազանությանը և կենսալիցությանը՝ ասես հաստատելով այն կարծիքը, որ տիեզերքի գեղեցկությունն է հայտ է գալիս ոչ միայն բազմազանության միասնականության, այլև միասնականի բազմազանության մեջ:

Է. Աթայանի մեկը մյուսին հաջորդող մենագրություններն ասես մի ամբողջի մասերն են՝ մի մեծ գիրք, որ ձգված է ժամանակի մեջ: Եվ դրանք կապողը միայն հեղինակի աճունը չէ. խորքային բովանդակային կապերն առանձին գրքերի շարքը վերածում են օրգանական ամբողջության: Ամեն մի հաջորդ գիրքը բնականորեն բխում է նախորդից, շարունակում, լրացնում այն, դրա հետ մեկտեղ ամփոփում միանգամայն նորը՝ նաև իր մեջ հաջորդի բողբոջները կրելով:

«Ոլորտների ոլորտի» նոր ոլորտներ են բացում հաջորդ մենագրությունները՝ «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (1992) և «Առողջների հիվանդությունը. անազատության բնութաբանություն և տիպաբանություն» (1997): Սրանք, է. Աթայանի «մեծ գրքի» նոր գլուխները լինելով, միաժամանակ ազատության փիլիսոփայությունից ամբողջ աշխարհում գրվող գրքում նոր բացվող մեծարժեք էջեր են: Դեռևս «Էլեզու և ար-

տալեզվական իրականություն» գրքի վերջում Homo Creator-ի ոգեշունչ հաստատման մեջ հնչում են ազատության փիլիսոփայության և ստեղծագործության փիլիսոփայության թեմաները: Հիմա արդեն հանգամանորեն ներկայացվում է դրանց համահյուսվածքը, որի առանցքը Ազատ Ստեղծագործության փիլիսոփայությունն է, որովհետև է. Աթայանի ըմբռնմամբ՝ ազատությունը միայն Ստեղծագործ Ազատություն կարող է լինել: Մի կողմից՝ իր նախկին խորհրդածությունները, մյուս կողմից՝ ազատության գաղափարով համաժողովրդական արբեցման հրաշքը և հենց հրաշքը չավարտված՝ այդ գաղափարի խելումները է. Աթայանին մղում են քննելու ազատության և անազատության բազմազան դրսևորումների բարդ զուգակցումները: Այստեղ ևս ամեն ինչ ներկայացվում է դիալեկտիկորեն (ինչը կարելի է «գերդիալեկտիկա» կոչել), լեզվափիլիսոփայության մեջ հղկված հայեցակերպային փոխներթափանցումների als ob («որպես թե») սկզբունքով:

Ի տարբերություն մեծ տարածում գտած այն տեսակետի, թե ազատությունը գիտակցված անհրաժեշտություն է՝ ըստ է. Աթայանի՝ ազատությունը անհրաժեշտության և պատահականության դիալեկտիկական միասնությունն է ապահովում: Այս տեսանկյունից ներկայացվող նշանի սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների բազմաշերտ նշանագիտական վերլուծությունը հանգեցնում է նշանի ձևի գաղափարի հղկմանը, ներքին ձևի բովանդակային էության լուսաբանմանը, նշանային իրողությունների հարաբերակիցների հայտնաբերմանը արտանշանային, օբյեկտիվ իրականության մեջ, երաժշտության խորագույն վերլուծությանը, ի վերջո՝ տեսության մասնավորումներին, որոնք նոր, «կիրառական» հայեցակերպով են ներկայացնում սուբյեկտային և օբյեկտային հարաբերությունները:

Ազատության և անազատության փիլիսոփայական և նշանագիտական վերլուծությունը լրացվում է նաև հոգեբանական քննությամբ (հատկապես «Առողջների հիվանդությունը» գրքում): Դիտարկման կիզակետում հայտնվում է անհատի (նաև անհատ ժողովրդի) հոգեբանությունը. հոգեբանափիլիսոփայական

շեշտադրումները հատուցում են այն գերապատվությունը, որը նախորդ գրքերում մարդ-աշխարհի ամբողջության մեջ տրվել էր անհատից դեպի դուրս ուղղված ոլորտների քննությամբ:

Մարդու քառանդամ կառույցը ներկայացնելով՝ է. Աթայանը ծավալում-խորացնում-քրի երես է հանում նախորդ գրքերում ևս արծարծված այն սկզբունքը, որ մարդու ներաշխարհի առողջությունը, ազատությունը և ներդաշնակությունը նույնական են: Մարմնի, հոգու, մտքի և Ես-ի ուղենիշ ազատությունը և անխուսափելի անազատության չափաբաժինը ներդաշնակորեն զուգակցվելու դեպքում բացառում են չորս հիմնական (և նրանց տարբեր զուգակցումներով առաջացող բազմաթիվ այլ) խեղումները, որ է. Աթայանը կոչում է «էլեթերիտ» (ազատության բորբոքում): Հոգու առողջության մեջ ազատության և անազատության ներդաշնակ հարաբերակցման որոշիչ դերի լուսաբանումը, շեղումների հոգեբանական պատճառների բացահայտումը խորիմաստ տեսությունը հագեցնում են նաև բացառիկ գործնական արժեքով:

Գրքերում ու հոդվածներում մտքերը, գաղափարներն են՝ տեսությունը:

Բայց դրանց կողքին, դրանցից առաջ մարդն է: Մարդը՝ իր շուրջը եղած մարդկանց նկատմամբ միշտ հոգատար, խրախուսող, ներողամիտ վերաբերմունքով: Մարդը, որ բազում հարցեր է առաջադրում, որոնց իր պատասխաններն ունի, բայց երբեք չի պարտադրում դրանք: Մարդը, որի ոչ միայն տեսությունը, այլև անձնական օրինակը վկայությունն են այն բանի, որ հնարավոր է մարմնավորել «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն»: Եվ դեռ հարց է, թե Ազատության, Սիրո և Ստեղծագործ Մանաչման ճանապարհն ընտրածների համար ինչն է ավելի ներգործուն, ավելի գոտեպնդող՝ այն, ինչ սովորեցնում է տեսությունը, թե այն, ինչ դաստիարակվում է անձնական օրինակով: Այս տողերը գրողը երջանիկ է, որ շատերի մեջն իրեն ևս բախտ է վիճակվել ազատ լինել այդ երկրներում, որովհետև ժամանակին՝ համալսարանական կրթության գոնե ավարտական փուլում, իր համար հայտնագործել է է. Աթայանին՝ որպես գիտնականի, և է. Աթայանին՝ որպես մարդու: Հայտնագործել է ընդմիջտ:

Ա. Ս. ԱՐԵՎԻՍՏՅԱՆ

«Բանքերի» խմբագրակազմը և խորհրդող խորապես վշտացած են մեծ գիտնականի, մարդու և մանկավարժի մահվամբ. է. Աթայանն իր մեծարժեք հոդվածներով և խորհրդի կազմում երկարամյա գործունեությամբ Հայաստանի և Գերմանիայի միջև աշխատանքների: